ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

13 ապրիլի 2016 թվականի **թիվ 3** քաղ. Մոսկվա

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդում Ղրղզստանի Հանրապետության ներկայացուցչի մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 16-րդ հոդվածին, «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» հիմնադրույթի («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 1 հավելված) 23-րդ կետին և Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 98 որոշմամբ հաստատված Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգի 3-5-րդ կետերին համապատասխան՝

1. Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդին ներկայացնել Ղրղզստանի Հանրապետության նախագահի 2015 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 239 հրամանագրին համապատասխան անհրաժեշտ լիազորություններով օժտված՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդում Ղրղզստանի Հանրապետության ներկայացուցիչ, Ղրղզստանի Հանրապետության փոխվարչապետ Օլեգ Միխայիլի Պանկրատովին:

2. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական միջկառավարական խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**